ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ , ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԵՎ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ 1-ԻՆԻՑ -3-ՐԴ ԵՎ 4_ՐԴԻՑ - 7- ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ «ՍՊՈՐՏԼԱՆԴԻԱ » ՄԱՐԶԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՍՊ-ԳՀԾՁԲ-18/02 96-2018

ք. Երևան «22» 02 2018 թ.

Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունը, ի դեմս աշխակազմի ղեկավար Վ. Էլոյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Պրեստիժ Լենդ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Արմինե Մխոյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **Սպորտային միջոցառումների կազմակերպում/** «Հայաստանի Հանրապետության մարզերի, Երևան քաղաքի և Արցախի Հանրապետության հանրակրթական դպրոցների 1-ինից 3-րդ և 4-րդից-7-րդ դասարանների միջև «Սպորտլանդիա» մարզական միջոցառման անցկացման » ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված --- աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 18500.0 (տասնութ միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ, Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[1]:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:[2]

Սույն պայմանագիրը կնքվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիմքով՝ պայմանով, որ դրա շրջանակներում գնում կարող է կատարվել անհրաժեշտ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում: Սույն մասի համաձայն կնքված պայմանագիրը լուծարվում է, եթե պայմանագրի կատարման համար համապատասխան իրավական ակտով ֆինանսական միջոցները չեն նախատեսվել

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով

1) Կատարողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխման դեպքում Կատարողը գրավոր տեղեկացնում է Պատվիրատուին՝ տրամադրելով գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում[3]:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել

---

[2] *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:*

[3] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում գործակալության պայմանագիր կնքելու միջոցով:*

ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է 15 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն	« Պրեստիժ Լենդ » ՍՊԸ
ք. Երևան, Աբովյան 9	ք. Երևան, Հալաբյան 59
ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն	«Կոնվերս բանկ» ՓԲԸ
հ/հ 900011010957	հ/հ 1930058863560100
ՀՎՀՀ 02586282	ՀՎՀՀ 01213386
Աշխատակազմի ղեկավար՝ Վ. Էլոյան	Տնօրեն՝ Ա.Մխոյան
---------- (ստորագրություն)	---------- (ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

«22» ----------02---------- 2018թ. կնքված Հավելված N 1
«ՍՊ-ԳՀԾՁԲ-18/02» - ծածկագրով պայմանագրի
- 96 - 2018

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համար	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը**
1	9262111	**Հայաստանի Հանրապետության մարզերի, Երևան քաղաքի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրակրթական դպրոցների 1-ից 3-րդ և 4-ից 7-րդ դասարանների միջև «Սպորտլանդիա» մարզական միջոցառման մրցույթի անցկացման համար նախատեսված անհրաժեշտ մարզագույքի և ծառայությունների ձեռքբերում** Հայաստանի Հանրապետության մարզերի, Երևան քաղաքի և Լ Հանրապետության հանրակրթական դպրոցների 1-ինից 3-րդ և 4-ից 7-րդ դասարանների միջև «Սպորտլ մարզական միջոցառման անցկացման նպատակն է՝ 1. անհատի բազմակողմանի ու ներդաշնակ զարգացում, դպրոցահասակ երեխաների առողջության ամրապնդում, առողջ ապրելակերպի ձևավորման գործում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի դերի բարձրացում. 1) դպրոցական տարիքի երեխաների շրջանում տարբեր մարզաձևերով մարզվելու կողմնորոշման ձևավորում: 2. Խնդիրներն են՝ 1) ֆիզիկական կուլտուրայի և սպորտի միջոցով դպրոցահասակ երեխաների ֆիզիկական դաստիարակության, առողջության ամրապնդման, նրանց ֆիզիկական որակների բարելավում. 2) դպրոցական տարիքի երեխաների շրջանում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի քարոզչություն, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի դերի կարևորում. 3) դպրոցական տարիքի երեխաների համար ֆիզիկական դաստիարակության, ֆիզիկական կուլտուրայով և սպորտով զբաղվելու	դրամ	18500000	1	***2-րից -4-րդ փուլերը*** *2-րդ փուլ՝ ՀՀ համայնքներում, Երևան քաղաքի 12 վարչական շրջաններում և Արցախի Հանրապետության Ստեփանակերտ քաղաքում* *-րդ փուլ՝ ՀՀ 10 մարզերում, Երևանքաղաքի և Արցախի հանրապետության Սպեփանակերտ քաղաք* *4-րդ եզրափակիչ փուլ՝ ք. Գյումրի* *Ք.Վանաձոր*	***10.03.2018թ-18.05.2018թ*** *2018թվականի մարտի 10-ից -20-ը* *2018թվականի ապրիլի 10-ից -25-ը* *2018թվականի մայիսի 9-ից- 11-ը* *2018թվականի մայիսի 16-ից- 18-ը*

		համար նպաստավոր պայմանների ստեղծում. 4) դպրոցական հիմնարկներում ֆիզկուլտուրային, առողջարարական և զանգվածային մարզական աշխատանքների կազմակերպման աշխատանքների խթանում: 3. Միջոցառումն անցկացվելու է 4 փուլով. 1) 1-ին փուլը՝ հանրակրթական դպրոցներում՝ փետրվարի 12-ից մինչև մարտի 1-ը, 2) 2-րդ փուլը՝ ՀՀ համայնքային, Երևան քաղաքի 12 վարչական շրջանների և Արցախի Հանրապետության Ստեփանակերտ քաղաքի՝ 2018 թվականի մարտի 10-ից 20-ը. 3) 3-րդ փուլ՝ ՀՀ մարզային, Երևան քաղաքի և Արցախի Հանրապետության Ստեփանակերտ քաղաքի՝ 2018 թվականի ապրիլի 10-ից 25-ը. 4) 4-րդ՝ եզրափակիչ փուլի մրցումներ՝ 1-ինից 3-րդ դասարանների միջև 2018 թվականի մայիսի 9-ից 11-ը՝ քաղաք Գյումրի և 4-րդից 7-րդ դասարանների աշակերտների միջև՝ մայիսի 16-ից 18-ը՝ քաղաք Վանաձոր: 4. Մրցույթի համայնքային և մարզային փուլերի անցկացման ժամանակացույցը ներկայացվում է Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն (այսուհետ՝ Նախարարություն) մինչև տվյալ օրացույցային տարվա մարտի 5-ը: 5. «Սպորտլանդիա» մարզական միջոցառման անցկացման աշխատանքները համակարգում է Նախարարությունը: 6. Մրցումների 1-ին ներդպրոցական փուլի անցկացման հսկողությունը իրականացնում են ՀՀ մարզպետարանները, Երևանի քաղաքապետարանը և Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարությունը, մրցումների 2-րդ փուլի կազմակերպման և անցկացման աշխատանքները համայնքներում իրականացնում են համայնքապետարանները և Երևանի քաղաքի վարչական շրջանները և Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարությունը, մրցումների 3-րդ փուլի կազմակերպման և անցկացման անմիջական պատասխանատվությունը կրում են Հայաստանի Հանրապետության մարզպետարանները, Երևանի քաղաքապետարանը, ինչպես նաև Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարությունը, իսկ 4-րդ՝ եզրափակիչ փուլի կազմակերպման և անցկացման անմիջական պատասխանատվությունը կրում է Նախարարությունը:					

		7. Ծրագիրն իրականացվում է Հայաստանի Հանրապետության մարզերի 42 քաղաքներում (տարածաշրջաններում), Երևան քաղաքի 9 վարչական շրջաններում և Արցախի Հանրապետության հանրակրթական դպրոցների (թվով 52) 1-3-րդ դասարանների բոլոր երեխաները 1-ինից 3-րդ դասարանների բոլոր աշակերտները՝ թիմի կազմը՝ 5 տղա, 5 աղջիկ, 1 մանկավարժ և 1 ներկայացուցիչ. *(1-ին դասարան՝ 1-տղա, 1-աղջիկ, 2-րդ դասարան՝ 2-տղա, 2-աղջիկ և 3-րդ դասարան՝ 2-տղա, 2-աղջիկ).* 2) 4-7-րդ դասարանների բոլոր աշակերտները թիմի կազմը՝ 5 տղա, 5 աղջիկ, 1 մանկավարժ և 1 ներկայացուցիչ) *(4-րդ դասարան՝ 1-տղա, 1-աղջիկ, 5-րդ դասարան՝ 1-տղա, 1-աղջիկ, 6-րդ դասարան՝ 1-տղա, 1-աղջիկ և 7-րդ դասարան՝ 2-տղա, 2-աղջիկ):* 8. Ծրագրի կազմակերպման և անցկացման կարգը տեղերում որոշում են կազմակերպիչները *(մարզպետարաններ, համայնքապետարաններ և Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարությունը):* Մրցումների ծրագրի մեջ կարող են կատարվել մասնակի լրացումներ և փոփոխություններ: 9. Մրցույթի 2-րդ փուլում մրցանակային տեղեր գրաված դպրոցները պարգևատրվում են Նախարարության համապատասխան կարգի հավաստագրերով, գավաթներով, իսկ 3-րդ փուլերում 1-ին, 2-րդ և 3-րդ տեղերը գրաված դպրոցները պարգևատրվում են Նախարարության համապատասխան կարգի հավաստագրերով, գավաթներով, շնորհակալագրերով և մրցանակներով (մարզագույք): 10. Միջոցառման 4-րդ՝ եզրափակիչ փուլում ընդհանուր թիմային հաշվարկով 1-ին, 2-րդ և 3-րդ տեղերը գրաված հանրակրթական դպրոցները պարգևատրվում են Նախարարության հավաստագրերով, մեդալներով, գավաթներով, դրամական մրցանակներով: 11. Մրցույթի եզրափակիչ փուլի մրցանակային 1-ին, 2-րդ, 3-րդ տեղերը գրաված հանրակրթական դպրոցները երկու տարիքային խմբերում պարգևատրվում են դրամական մրցանակով՝ հանրակրթական դպրոցներին անհրաժեշտ մարզագույք ձեռք բերելու համար՝ 1) 1-ին տեղ՝ 450.0 հազար *(հինգ հարյուր հիսուն հազարդրամին համարժեք մարզագույք)* դրամ, 2) 2-րդ տեղ՝ 350.0 հազար *(չորս հարյուր հիսուն հազար հազար դրամին համարժեք մարզագույք)* դրամ, 3) 3-րդ տեղ՝ 250.0 հազար *(երեք հարյուր հիսուն հազար հազար դրամին համարժեք մարզագույք)* դրամ, իսկ մրցույթի եզրափակիչ փուլի 4-12-րդ տեղերը գրաված հանրակրթական դպրոցները երկու տարիքային խմբերում պարգևատրվում են մարզագույքով և շնորհակալագրերով, ինչպես նաև 4-րդ փուլի մասնակից բոլոր երեխաներին տրվում են նվերներ:					

12. Միջոցառման ծախսերն իրականացվում են տարեկան պետական բյուջեով նախատեսված ծրագրի շրջանակում:

2-րդ փուլում մատուցվող ծառայություններ
10.03.2018 - 20.03.2018 թթ.
(1-ից 3-րդ դասարան) (4-ից 7-րդ դասարան)

1) 2-րդ ***փուլը՝*** համայնքներում անցկացվում է Հայաստանի Հանրապետության մարզերի 42 քաղաքներում (տարածաշրջաններում), Երևան քաղաքի 9 վարչական շրջաններոիմ և Արցախի Հանրապետության Ստեփանակերտ քաղաքի հանրակրթական դպրոցներում (թվով 52)

- ***Հավաստագիր.*** չափսը՝ 30 x 20 սմ, թղթե, օֆսեթ, կավճապատ, խտությունը՝ 220 գ/քմ
Տեքստը համաձայնեցնել նախարարության աշխատակազմի ՄՍՖԴՔ վարչության հետ
- 52 x 3 = 156 հատ, ***2 տարիքային խմբերում -*** **312 հատ**

- ***Գավաթ*** (1-ին, 2-րդ և 3-րդ տեղերը գրված պատվիրակության համար)՝ 65 սմ, 60 սմ և 50 սմ բարձրությամբ, ոսկեգույն, էբոնիտե պատվանդանով *- 52 x 3 = 156 հատ*

2 տարիքային խմբերում - **312 հատ**

3-րդ փուլում մատուցվող ծառայություններ
2018թ. 10-25 ապրիլ՝ (1-ից 3-րդ դասարան) և
(4-ից 7-րդ դասարան)

2) ***3-րդ փուլը՝*** ՀՀ մարզերում Երևան քաղաքում և Արցախի Հանրապետությունում.

- ***Հավաստագիր.*** չափսը՝ 30 x 20 սմ, թղթե, օֆսեթ, կավճապատ, խտությունը՝ 220 գ/քմ
Տեքստը համաձայնեցնել նախարարության աշխատակազմի ՄՍՖԴՔ վարչության հետ *-36 հատ*

72 հատ

- ***3-րդ փուլի մրցումներին անհրաժեշտ մարզագույք՝***

(12 մարզերում) 1-ին, 2-րդ և 3-րդ տեղերը գրված դպրոցներին, **ըստ անհրաժեշտության** *-36 դպրոցներ՝*
36 հատ՝ 1-3-րդ դասարանցիների մրցույթի համար և 36 հատ 4-7-րդ դասարանցիների մրցույթի համար

Ընդ. 72

		1-ին տեղը գրաված դպրոցը՝					
		Գնդակ ֆուտբոլի՝ Արհեստական կաշվից, N 5 չափի (68-70սմ շրջանագիծ), քաշը 420-440 գրամ, 32 կտորից (պանել) կարված՝ առնվազն 5 սինթետիկ թելիկներից գործված կարի թելով, 4 շերտ, պոլիեստերի կամ բամբակե ներքին շերտով, ռետինե կամ լատեքսե միջուկով (կամեռով), յուրաքանչյուր թիմին 5 հատ: (5+5=**10 հատ)** Գնդակ վոլեյբոլի՝ Արհեստական կաշվից, N 5 չափի (65-67սմ շրջանագիծ), քաշը 260-280 գրամ, 18 կտորից (պանել) ձեռքով կամ մեքենայով կարված՝ առնվազն 5 սինթետիկ թելիկներից գործված կարի թելով, 2 շերտ, պոլիեստերի կամ բամբակե ներքին շերտով, ռետինե կամ լատեքսե միջուկով (կամեռով), բազմերանգ գունավորմամբ N 6, յուրաքանչյուր թիմին 6 հատ: (6+6=**12 հատ)** Գնդակ բասկետբոլի՝ Արհեստական կաշվից, N 7 չափի (75-75.88սմ շրջանագիծ), քաշը 567-650գրամ, 12 կտորից (պանել), երկու գույնանի, բացօդյա և փակ դահլիճներում օգտագործելու համար, N 6, յուրաքանչյուր թիմին 5 հատ: (5+5=**10 հատ)** • Վոլեյբոլի ցանց՝ Ցանցի բարձրությունը 1մ լայնությունը 9.5-10մ: Վերին եզրը 7սմ բարձրությամբ իսկ ստորին եզրը 5 սմ բարձրությամբ ժապավեններով սահմանազատված: Վերին ժապավենի միջով անցկացված 4մմ հաստությամբ առնվազն 15մ երկարությամբ պողպատե ճոպանով, ներքևի ժապավենի միջով՝ ստորին եզրը ձգելու պարանով, գործվացքը 10x10 սմ անցքերով, սև գույնի սինթեթիկ մանրաթելերից գործված 2-3մմ հաստությամբ թելից: Ցանցի ծայրերում իրարից 9մ հեռավորության վրա տեղադրված են 1մ բարձրությամբ և 5 սմ լայնությամբ դաշտի սահմանները եզրագծող ժապավեններ, յուրաքանչյուր թիմին 1 հատ: **(1+1=2 հատ)** • Սեղանի թենիսի ձեռնաթի (ռակետ)՝ Փայտյա բռնիչով 10սմ երկարությամբ, հարթ մակերևույթը ռետինե երեսով, հարվածային մասը չափերը 15-15.5սմ x 15.5-16սմ և 1.2 սմ հաստությամբ, յուրաքանչյուր թիմին 6 հատ: (6+6=**12 զույգ)** • Ցատկապարաններ. պարանը՝ ռետինե, բռնիչները պլաստմասսե, 2-2,5 մետր երկարությամբ, իր տուփի մեջ, մրցումային և մարզումային ստանդարտներին համապատասխան, յուրաքանչյուր թիմին 9 հատ: (9+9=**18 հատ)** • Վայրկյանաչափ էլեկտրոնային, պլաստմասսե պատյանով, յուրաքանչյուր թիմին 2 հատ: (2+2=**4** հատ)					

2-րդ տեղը գրաված դպրոցը՝

- **Գնդակ ֆուտբոլի՝** Արհեստական կաշվից, N 5 չափի (68-70սմ շրջանագիծ), քաշը 420-440 գրամ, 32 կտորից (պանել) կարված՝ առնվազն 5 սինթետիկ թելիկներից գործված կարի թելով, 4 շերտ, պոլիեստերի կամ բամբակե ներքին շերտով, ռետինե կամ լատեքսե միջուկով (կամեռով): Յուրաքանչյուր թիմին 4 հատ: (4 +4=**8 հատ)**
- **Գնդակ վոլեյբոլի՝** Արհեստական կաշվից, N 5 չափի (65-67սմ շրջանագիծ), քաշը 260-280 գրամ, 18 կտորից (պանել) ձեռքով կամ մեքենայով կարված՝ առնվազն 5 սինթետիկ թելիկներից գործված կարի թելով, 2 շերտ, պոլիեստերի կամ բամբակե ներքին շերտով, ռետինե կամ լատեքսե միջուկով (կամեռով), բազմերանգ գունավորմամբ N 6, յուրաքանչյուր թիմին 5 հատ:

(5+5=**10 հատ)**

Գնդակ բասկետբոլի՝ Արհեստական կաշվից, N 7 չափի (75-75.88սմ շրջանագիծ), քաշը 567-650գրամ, 12 կտորից (պանել), երկու գույնանի, բացօդյա և փակ դահլիճներում օգտագործելու համար, N 6, յուրաքանչյուր թիմին 4 հատ: (4+4=**8 հատ)**

- **Վոլեյբոլի ցանց՝** Ցանցի բարձրությունը 1մ լայնությունը 9.5-10մ: Վերին եզրը 7սմ բարձրությամբ իսկ ստորին եզրը 5 սմ բարձրությամբ ժապավեններով սահմանազատված: Վերին ժապավենի միջով անցկացված 4մմ հաստությամբ առնվազն 15մ երկարությամբ պողպատե ճոպանով, ներքևի ժապավենի միջով՝ ստորին եզրը ձգելու պարանով, գործվացքը 10x10 սմ անցքերով, սև գույնի սինթեթիկ մանրաթելերից գործված 2-3մմ հաստությամբ թելից: Ցանցի ծայրերում իրարից 9մ հեռավորության վրա տեղադրված են 1մ բարձրությամբ և 5 սմ լայնությամբ դաշտի սահմանները եզրագծող ժապավեններ, յուրաքանչյուր թիմին 2 հատ: (1+1=**2 հատ)**
- **Սեղանի թենիսի ձեռնաթի (ռակետ)՝** Փայտյա բռնիչով 10սմ երկարությամբ, հարթ մակերևույթը ռետինե երեսով, հարվածային մասը չափերը 15-15.5սմ x 15.5-16սմ և 1.2 սմ հաստությամբ, յուրաքանչյուր թիմին 5 հատ: **(5+5=10 զույգ)**
- **Ցատկապարաններ**. պարանը՝ ռետինե, բռնիչները՝ պլաստմասսե, 2-2,5 մետր երկարությամբ, իր տուփի մեջ, մրցումային և մարզումային ստանդարտներին համապատասխան, յուրաքանչյուր թիմին 6 հատ: **(6+6=12 հատ)**
- **Վայրկյանաչափ էլեկտրոնային**, պլաստմասսե պատյանով, յուրաքանչյուր թիմին 2 հատ:

(2+2=**4 հատ**)

		3-րդ տեղը գրաված դպրոցը՝					
		• **Գնդակ ֆուտբոլի** Արհեստական կաշվից, N 5 չափի (68-70սմ շրջանագիծ), քաշը 420-440 գրամ, 32 կտորից (պանել) կարված՝ առնվազն 5 սինթետիկ թելիկներից գործված կարի թելով, 4 շերտ, պոլիեստերի կամ բամբակե ներքին շերտով, ռետինե կամ լատեքսե միջուկով (կամեռով), յուրաքանչյուր թիմին 4 հատ: (4+4=**8 հատ)** • **Գնդակ վոլեյբոլի** Արհեստական կաշվից, N 5 չափի (65-67սմ շրջանագիծ), քաշը 260-280 գրամ, 18 կտորից (պանել) ձեռքով կամ մեքենայով կարված՝ առնվազն 5 սինթետիկ թելիկներից գործված կարի թելով, 2 շերտ, պոլիեստերի կամ բամբակե ներքին շերտով, ռետինե կամ լատեքսե միջուկով (կամեռով), բազմերանգ գունավորմամբ N 6, յուրաքանչյուր թիմին 4 հատ: (4+4=**8 հատ)** • **Գնդակ բասկետբոլի**՝ Արհեստական կաշվից, N 7 չափի (75-75.88սմ շրջանագիծ), քաշը 567-650գրամ, 12 կտորից (պանել), երկու գույնանի, բացօդյա և փակ դահլիճներում օգտագործելու համար, N 6 N 6, յուրաքանչյուր թիմին 4 հատ: (4+4=**8 հատ)** • **Վոլեյբոլի ցանց՝** Ցանցի բարձրությունը 1մ լայնությունը 9.5-10մ: Վերին եզրը 7սմ բարձրությամբ իսկ ստորին եզրը 5 սմ բարձրությամբ ժապավեններով սահմանազատված: Վերին ժապավենի միջով անցկացված 4մմ հաստությամբ առնվազն 15մ երկարությամբ պողպատե ճոպանով, ներքևի ժապավենի միջով՝ ստորին եզրը ձգելու պարանով, գործվացքը 10x10 սմ անցքերով, սև գույնի սինթեթիկ մանրաթելերից գործված 2-3մմ հաստությամբ թելից: Ցանցի ծայրերում իրարից 9մ հեռավորության վրա տեղադրված են 1մ բարձրությամբ և 5 սմ լայնությամբ դաշտի սահմանները եզրագծող ժապավեններ, Յուրաքանչյուր թիմին 1 հատ: (1+1=**2 հատ)** • **Ցատկապարաններ՝** պարանը՝ ռետինե, բռնիչները՝ պլաստմասսե, 2-2,5 մետր երկարությամբ, իր տուփի մեջ, մրցումային և մարզումային ստանդարտներին համապատասխան, յուրաքանչյուր թիմին 4 հատ: **(4+4=8 հատ)** ***Գավաթ*** (1-ին, 2-րդ և 3-րդ տեղերը գրաված պատվիրակության համար) 65 սմ, 60 սմ և 50 սմ բարձրությամբ, ոսկեգույն, էբոնիտե պատվանդանով. *12 x 3 = 36 հատ* *36 հատ՝ 1-3-րդ դասարանցիների մրցույթի համար և 36 հատ 4-7-րդ դասարանցիների մրցույթի համար* **Ընդ. 72հատ**					

		<u>4-րդ եզրափակիչ փուլում մատուցվող ծառայությունները</u> **2018թ. մայիսի 9-11-ը (1-ից 3-րդ դասարան) ք. Գյումրի,** **2018թ մայիսի 16-ից 18-ը (4-ից 7-րդ դասարան)** **ք. Վանաձոր:**					
		3) 4-րդ եզրափակիչ փուլը: • ***<u>Հավաստագիր</u>.*** չափսը՝ 30 x 20 սմ, թղթե, օֆսեթ, կավճապատ, խտությունը՝ 220 գ/քմ Տեքստը համաձայնեցնել նախարարության աշխատակազմի ՄՍՖԴՔ վարչության հետ *-39 հատ* *39 հատ՝ 1-3-րդ դասարանցիների մրցույթի համար և 39 հատ 4-7-րդ դասարանցիների մրցույթի համար* **Ընդ. 78հատ** • ***<u>Շնորհակալագիր</u>.*** չափսը՝ 30 x 20 սմ, թղթե, օֆսեթ, կավճապատ, խտությունը՝ 220 գ/քմ Տեքստը համաձայնեցնել նախարարության աշխատակազմի ՄՍՖԴՔ վարչության հետ - *10 հատ* – *10 հատ՝ 1-3-րդ դասարանցիների մրցույթի համար և 10 հատ 4-7-րդ դասարանցիների մրցույթի համար* **Ընդ. 20հատ** • ***<u>Մեդալներ</u>.*** չափսը՝ 5 սմ տրամագծով x 3 սմ հաստությամբ, մետաղե ձուլվածք, եռագույն ժապավենով՝ 0.80 սմ երկարությամբ, սինթետիկ – հումքից - *36 հատ* – *1-3-րդ դասարանցիների մրցույթի համար 36 հատ* – *4-7-րդ դասարանցիների մրցույթի համար 36 հատ* **Ընդ. 72հատ** • ***4-րդ եզրափակիչ փուլի մրցումների պարգևատրման ցանկ*** Մրցույթի եզրափակիչ փուլի մրցանակային 1-ին, 2-րդ, 3-րդ տեղերը գրաված հանրակրթական դպրոցները երկու տարիքային խմբերում պարգևատրվում են դրամական մրցանակով՝ հանրակրթական դպրոցներին անհրաժեշտ մարզագույք ձեռք բերելու համար: • ***<u>Գավաթ</u>*** (1-ին, 2-րդ և 3-րդ տեղերը գրաված դպրոցների համար)՝ 65 սմ, 60 սմ և 50 սմ բարձրությամբ, ոսկեգույն, էբոնիտե պատվանդանով. - *3 հատ՝ 1-3-րդ դասարանցիներին մրցումների մրցանակակիրներին և 3 հատ՝ 4-7-րդ դասարանցիների մրցումների*					

		մրցանակակիրներին Ընդ. **6 հատ** **Եզրափակիչ փուլում 4-12-րդ տեղերը** գրված դպրոցներին մարզագույք՝ հանձնվում է անհատույց, սեփականության իրավունքով, ըստ անհրաժեշտության. 9 դպրոցներ՝ 1-3-րդ դասարանների և 9 դպրոցներ 4-7-րդ դասարանների մրցույթների մասնակիցներին **Ընդ. 18 դպրոցներ** • Գնդակ ֆուտբոլի Արհեստական կաշվից, N 5 չափի (68-70սմ շրջանագիծ), քաշը 420-440 գրամ, 32 կտորից (պանել) կարված՝ առնվազն 5 սինթետիկ թելիկներից գործված կարի թելով, 4 շերտ, պոլիեստերի կամ բամբակե ներքին շերտով, ռետինե կամ լատեքսե միջուկով (կամեռով): 4-ական գնդակ յուրաքանչյուր թիմին: **(**9 դպրոց+9 դպրոց=**18 դպրոցի համար՝ 72 հատ** • Գնդակ վոլեյբոլի՝ Արհեստական կաշվից, N 5 չափի (65-67սմ շրջանագիծ), քաշը 260-280 գրամ, 18 կտորից (պանել) ձեռքով կամ մեքենայով կարված՝ առնվազն 5 սինթետիկ թելիկներից գործված կարի թելով, 2 շերտ, պոլիեստերի կամ բամբակե ներքին շերտով, ռետինե կամ լատեքսե միջուկով (կամեռով), բազմերանգ գունավորմամբ: 4-ական գնդակ յուրաքանչյուր թիմին: **(**9դպրոց+9դպրոց=**18 դպրոցի համար՝ 72 հատ)** • Գնդակ բասկետբոլի,՝ Արհեստական կաշվից, N 7 չափի (75-75.88սմ շրջանագիծ), քաշը 567-650գրամ, 12 կտորից (պանել), երկու գույնանի, բացօդյա և փակ դահլիճներում օգտագործելու համար, N 6: 4-ական գնդակ յուրաքանչյուր թիմին (9 դպրոց+9 դպրոց=**18 դպրոցի համար՝ 72 հատ** • Վոլեյբոլի ցանց՝ Ցանցի բարձրությունը 1մ լայնությունը 9.5-10մ: Վերին եզրը 7սմ բարձրությամբ իսկ ստորին եզրը 5 սմ բարձրությամբ ժապավեններով սահմանազատված: Վերին ժապավենի միջով անցկացված 4մմ հաստությամբ առնվազն 15մ երկարությամբ պողպատե ճոպանով, ներքևի ժապավենի միջով՝ ստորին եզրը ձգելու պարանով, գործվացքը 10x10 սմ անցքերով, սև գույնի սինթեթիկ մանրաթելերից գործված 2-3մմ հաստությամբ թելից: Ցանցի ծայրերում իրարից 9մ հեռավորության վրա տեղադրված են 1մ բարձրությամբ և 5 սմ լայնությամբ դաշտի սահմանները եզրագծող ժապավեններ: 1-ական յուրաքանչյուր դպրոցին (9 դպրոց+9 դպրոց=**18 դպրոցի համար- 18 հատ)** : • **<u>Ցատկապարաններ</u>**. պարանը՝ ռետինե, բռնիչները՝ պլաստմասսե, 2-2,5 մետր երկարությամբ, իր տուփի մեջ, մրցումային և մարզումային					

		ստանդարտներին համապատասխան, յուրաքանչյուր դպրոցին **6 հատ**: (9 դպրոց+9 դպրոց=**18 դպրոցի համար, 108 հատ)** **<u>Վարկյանաչափ՝ էլեկտրոնային</u>**,պլաստմասսե պատյանով: Յուրաքանչյուր դպրոցին 4 հատ: (9 դպրոց+9 դպրոց=18 **դպրոցի համար- 72 հատ)** • ***Մարզադահլիճի վարձակալում*** Գյումրի և Վանաձոր քաղաքների մարզաբազաներից մեկում: Մարզադահլիճի ձևավորում դրոշակներով և պաստառներով զարդարված **2 օր** • ***Ռադիոհանգույցի վարձակալում՝*** բարձրախոս 7 կվ հզորությամբ, 2 բարձրախոս առանց լարի, 1-ը լարով, միկշերային վահանակ **2 օր** • ***Մրցավարների համար մարզահագուստ*** բամբակյա կտորից, ամառային շապիկ և գլխարկ, գույնը՝ սպիտակ (հանձնվում է անհատույց, սեփականության իրավունքով) **18 հատ** • ***Գովազդային նյութերի*** պատրաստում (ֆոտո, տեսաֆիլմերի, նկարահանում) *մրցման օրը* **2 օր** • **Այլ ծախսեր՝** տրանսպորտային միջոցներ մարզագույքը տեղափոխելու համար (Երևան -Գյումրի-Երևան, Երևան -Վանաձոր-Երևան **1 բեռնատ մեքենա** , հաղորդավարի ծառայություն) *մրցման օրը* **2 օր** • ***Նվերներ. մարզահագուստ մասնակից բոլոր երեխաների համար՝*** կիսասինթետիկ հումքից, վերնազգեստը կարմիր՝ եզրագծված սև և սպիտակ գծերով, տաբատը սև (հանձնվում է անհատույց, սեփականության իրավունքով) - *120 հատ* **240 հատ** ***Անհրաժեշտ մարզագույք՝ եզրափակիչ փուլի մրցումների կազմակերպման համար՝*** • **<u>Մարմնամարզական օղակ</u>** ալյումինե, Հաստություն 20մմ, տրամագիծ՝ 95 սմ: **(5+5=10 հատ)** • **<u>Գնդակ բասկետբոլի</u>**,՝ Արհեստական կաշվից, N 6 չափի (75-75.88սմ շրջանագիծ), քաշը 567-650գրամ, 12 կտորից (պանել), երկու գույնանի, բացօդյա և փակ դահլիճներում օգտագործելու համար, N 6 **(3+3=6 հատ)**					

		• **Մարմնամարզական ներքնարկներ** չափսը 1 մ x 2 մ, պատրաստված սպունգից, երեսպատված արհեստական կաշվով,հաստությունը 7-10 սմ: **(3+3=6 հատ)** • ***Փոքր օղակ՝ պլաստմասե նյութից, գունավոր, չափսերը 30-40 սմ՝ 15 հատ*** • ***Հաղթանակ բաթի տաբեր՝ տաբերը գունավոր տպված, A4 տպագրական չափսի թղթի վրա, լամինացված, 24 հատ*** • ***Երկանիվ հեծանիվներ, կցորդ անիվներով՝ (12 դույմ) 3 հատ*** • ***Երկար պարկ՝ (թունել 3մ x 1մ) չափսի, 3+3=6 հատ*** **Գրենական պիտույքներ՝** *Կաշվե թղթապանակ փափուկ կազմով և << զինանշանով, 35 սմ x 23 սմ չափսի **6 հատ** *Թղթե արագակար կավճած ստվարաթղթից, մետաղական ամրակով, A4 (210 x 297 մմ) ձևաչափի թերթերի համար **40 հատ** *Ֆայլ (թափանցիկ պոլիմերային թաղանթ, A4 ձևաչափի թղթերի համար, արագակալներին ամրացնելու հնարավորությամբ), 1 տուփ **100 հատ** *Թղթե կպչուն ժապավեն՝ 48 մմ x 100 մ, տնտեսական, մեծ գլանափաթաթված ժապավեն 48 մմ լայնությամբ, սոսնձային շերտի հաստությունը՝ 0,018-0,030 մմ կամ 0,030-0,060 մմ, ժապավենի երկարությունը՝ 100 մ: **6 հատ**					

		• Թուղթ A4 չափսի 1 (21 x 29.7), չկավճած թուղթ, օգտագործվում է տպագրման համար, թելիկներ չպարունակող, մեխանիկական եղանակով ստացված, 80 գ/մ^2 (210 x 297) մմ: **2 հատ** *Թղթապանակ (ռեգիստրատոր) 2 օղակով, պլաստիկ, լայնությունը՝ 80 մմ, A4 չափսի: **10 հատ** *Գրիչ գնդիկավոր. տարբեր գույների, տարբեր տեսակի կառուցվածքներով, մեծ և փոքր չափերի: **20 հատ** *Մատիտ, գրաֆիտե միջուկով, հասարակ, սև, համապատասխան կարծրությամբ: **20 հատ** *Ապակարիչ. գրասենյակային ապակարիչ՝ N 10 ասեղներով կարված թղթերը քանդելու համար: **2 հատ**					

**Պարտադիր պայման է գույքի չօգտագործված լինելը.*

*** 2-րդ և 3-րդ փուլերում անհրաժեշտ գույքը կատարողը հասցնում է ՀՀ մարզպետարանների, Երևանի քաղաքապետարան և Արցախի կրթության, գիտության և սպորտի նախարարության աշխատակազմերի գտնվելու վայրեր, իսկ 4-րդ փուլի գույքը՝ համապատասխանաբար ք. Գյումրի և ք. Վանաձոր (ժամկետները համաձայնեցվում են Պատվիրատուի հետ):*

**** Եզրափակիչ փուլի անհրաժեշտ գույքը Կատարողը հասցնում է մրցավայր:**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հայաստանի Հանրապետության սպորտի և
երիտասարդության հարցերի
նախարարություն
ք. Երևան, Աբովյան 9
ՀՀ ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
ՀՎՀ 900011010957

ՀԾՀՀ 02586282

Աշխատակազմի ղեկավար Կ. Էլոյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

« Պրեստիժ Լենդ » ՍՊԸ
ք. Երևան, Հալաբյան 59
«Կոնվերս բանկ» ՓԲԸ

Հ/Հ 1930058863560100

ՀԾՀՀ 01213386

Տնօրեն Ա.Մխոյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N
«22» 02 20[illegible]թ. կնքվա
ՍՊ-ԳՀԾՁԲ-18/02՝ ծածկագրով պայմանագր
-96-2018

Հազ.ՀՀ դրամ

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Ծառայության															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	92621110	Հայաստանի Հանրապետության մարզերի, Երևան քաղաքի և Երցախի Հանրապետության հանրակրթական դպրոցների 1-ինից 3-րդ և 4-րդից-7-րդ դասարանների միջև «Սպորտլանդիա» մարզական միջոցառման անցկացման		18500.0	18500.0	18500.0	18500.0	18500.0	18500.0	18500.0	18500.0	18500.0	18500.0	18500.0	**18500.0**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն
ք. Երևան, Աբովյան 9
ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն
ՀՎՀՀ 900011010957
ՀԿՀՀ 02586282

Աշխատակազմի ղեկավար Վ. Էլոյան

/ստորագրություն/ Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

« Պրեստիժ Լենդ » ՍՊԸ
ք. Երևան, Հալաբյան 59
«Կոնվերս բանկ» ՓԲԸ
ՀՎՀ 19300588635601 00
ՀԿՀՀ 01213386

Տնօրեն Ա.Մխոյան

/ստորագրություն/ Կ.Տ

Հավելված 3
«22» 02 2018 թ. կնքված
«ՍՊ-ԳՀԾՁԲ-18/02» ծածկագրով պայմանագրի
- 96 - 2018

Պատվիրատու
Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն
ք. Երևան, Աբովյան 9
ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն
Հ/Հ 900011010957

ՀՎՀՀ 02586282

Պայմանագրի կողմ
« Պրեստիժ Լենդ » ՍՊԸ
ք. Երևան, Հալաբյան 59
«Կոնվերս բանկ» ՓԲԸ

Հ/Հ 1930058863560100

ՀՎՀՀ 01213386

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« » ---------- 2018 թ. կնքված
«ՍՊ-ԳՀԾՁԲ -18/02» *ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունը (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն